Տ Ա Ր Ե Կ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի 2021 թ. գիտական հետազոտությունների և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին

1. **ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի 2021 թ. գործունեության կարևորագույն արդյունքներից են՝**

«Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-3» գիտական թեմայի /ղեկ՝ պ.գ.թ. Արմեն Հայրապետյան/ շրջանակներում՝

ա. 2021թ. Ջրաձորի ամրոց-բնակավայրի պեղումներով բացահայտվեցին որոշակի համադրելի իրողություններ Շիրակի Ք.ա. IX-VIII դդ. իրարից հեռու տեղադրված բնակավայրերում: Ջրաձորի № 5 կացարանի տափանված հատակի վրա բացվեցին սաջ և աղորիքներ: Նույն տեղում հայտնաբերվեց հոր՝ լցված Ք.ա. IX-VIII դդ. բնորոշ առարկաներով: Պատկերը նույնն է նաև Ազատանի ամրոցի պարսպին հարող համաժամանակյա կացարանում և Շիրակավանի ամրոցում: Նման ընդհանրությունների առկայությունը տարբեր հուշարձաններում թույլ են տալիս եզրակացնելու, որ Ք.ա. VIII դ. երկու ամրոցները և բնակավայրերը ենթարկվել են հարձակման: Եթե Ազատանի բնակավայրում այն արտահայտվում է խոշոր հրդեհով, ապա Ջրաձորի ամրոց բնակավայրում և Շիրակավանի ամրոցում հայտնաբերվել են ուրարտական ջարդված և ծռված զենքեր, պարսպի մեջ մտած նետասլաքներ: Այս իրողությունների համադրումը Շիրակում գտնվող ուրարտական երկու արձանագրությունների տվյալների հետ, թույլ է տալիս դիտարկել ուրարտական զորքերի հյուսիսից հարավ-արևելք և հարավ-արևմուտք, այնուհետև Ախուրյան գետի ավազանով դեպի Արարատյան դաշտ շարժման ուղղությունները:

բ. Լեռնակերտի № 1 դամբանադաշտի պեղումներով բացվեցին միջին բրոնզից ուշ բրոնզի անցման փուլին (Ք.ա. XVI դ. II կես-XV դ. I կես) վերագրվող թաղումներ, որոնցում միաժամանակ հանդիպում են և՛ միջինբրոնզեդարյան կարմիրբերդյան, և՛ ուշբրոնզեդարյան առարկաներ: Մեծ կարևորություն ունեն նաև ուշբրոնզեդարյան սալարկղային դամբանների պեղումները: Հենապատ-կրոմլեխով եզրագծված, քարային լիցքով, արևելք-արևմուտք ուղղված սալարկղային խցերով և արևելյան կողմում կցակառույցներով ուշ բրոնզից երկաթի դարի անցման փուլին վերագրվող այդ դամբանները տիպական չեն Շիրակի համաժամանակյա հուշարձանների համար: Անցումային փուլի սալարկղային այս դամբաններում փաստագրվել են երկշերտ խմբային թաղումներ՝ տարատեսակ ուղեկցող գույքով: Խմբային թաղումների մարդաբանական, հնաԴՆԹ և ռադիոմետրիկ հետազոտությունները հնարավորություն կտան պատկերացում կազմելու Արագածի լանջերի հնահանրույթների և մշակույթների հաջորդականության և ժամանակագրության մասին:

գ. Ալեքսանդրապոլի օրինակով ուսումնասիրվեց տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը Հայաստանի առաջին հանրապետության տարիներին: ՏԻՄ-երի ձևավորումը հանդիսացավ նորանկախ հանրապետության պետական կառավարման համակարգի ու հանրային իշխանության իրականացման կարևորագույն միջոց: Դրանց գործունեության քննությունը կարևոր նշանակություն ունի Հայաստանի առաջին Հանրապետության պետական համակարգի պատմության ամբողջացման համար, իսկ ձեռք բերված փորձը օգտակար է ներկայիս ՀՀ տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի ձևավորման տեսակետից:

2. Բազային ֆինանսավորմամբ ստացված հիմնական արդյունքները 2021թ.

ԳԱԱ ՇՀՀ կենտրոնը 2021թ. շարունակել է իրականացնել **«Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-3»** գիտահետազոտական ծրագիրը /ղեկ.՝ պ.գ.թ. Արմեն Հայրապետյան/:

Հնագիտության գծով- 2021թ. պատրաստվել և ՀՀ հնագիտական միջգերատեսչական հանձնաժողովին են հանձնվել Մեծ Սեպասարի, Զրաձորի, Զրափիի, Ազատանի, հնավայրերի պեղումների գիտական ամփոփ հաշվետվությունները: Կատարվել են հայ-գերմանական համատեղ արշավախմբի պեղումներ Զրաձորի երկաթիդարյան ամրոց-բնակավայրում: Ընթացիկ տարվա պեղումներով հետազոտվել են նաև Լեռնակերտի միջին և ուշ բրոնզեդարյան, ինչպես նաև երկաթեդարյան դամբանային համալիրները, որտեղ փաստագրվել են մինչ այժմ Շիրակի համար ոչ տիպական թաղման կառույցներ և իրադրություններ: Ստացված մարդաբանական տվյալները ենթարկվում են հետազոտության:

Պատմագիտության գծով- 2021թ. ապացուցվել է, որ Հայկական լեռնաշխարհի հարևան մի շարք երկրանունների (Գամիռա, Իբերիա/Վիրք, Ադիաբենե և այլն) գոյությունը պայմանավորված լինելով Հայկական լեռնաշխարհի նկատմամբ այդ երկրների իրական դիրքով, միևնույն ժամանակ ունեն հնդեվրոպական-հայկական ծագում: Շարունակվել է պատմական Տայքի և հարակից տարածքների պատմաժողովրդագրական ուսումնասիրությունը, քննվել է XVI դ. օսմանյան հարկացուցակերում առկա ժողովրդագրական նյութը, ներկայացվել են Տայքի Կիսկիմի և Մամրվանի գավառների բնակչության թվաքանակն ու էթնոկրոնական կազմը: Հիմնավորվել է, որ XIX դ. վերջին հասարակական-քաղաքական կյանքում սկսված տեղաշարժերը և բանվորական շարժման վերելքը նպաստավոր պայմաններ ստեղծեցին հայ իրականության մեջ բանվորական մարքսիստական խմբակների ստեղծման համար: 1904-1905թթ. այս կազմակերպություններն Ալեքսանդրապոլում կազմակերպեցին և ղեկավարեցին երկաթուղային բանվորների ու աշխատավորական մյուս խավերի զանգվածային ելույթները: Բացահայտվել է, որ Ալեքսանդրապոլից և համանուն գավառի գյուղերից մեծ թվով հայ կաթոլիկներ XIXդ. երկրորդ կեսին մեկնել են Սբ Ղազար՝ ուսանելու: Նրանց շատերը հետագայում դարձան միաբանության անդամներ, մյուսներն ուսում ստանալով վերադարձան ու աշխույժ գործունեություն ծավալեցին Ալեքսանդրապոլի գավառի և Անդրկովկասի հայ կաթոլիկների շրջանում: Ուշագրավ փաստեր են հայտնաբերել նաև ալեքսանդրապոլցի հասարակական գործիչների և հայր Ղևոնդ Ալիշանի առնչությունների մասին: XXI դ. սկզբին տարածաշրջանի բնակչության թվի շարժընթացի, սեռատարիքային կազմի, բնական վերարտադրության և միգրացիայի փոփոխության ընթացքի մասին ներկայացվել են ժողովրդագրական բնույթի նոր տվյալներ:

Ազգագրության գծով – 2021թ. խնդիր է դրվել հետազոտել Շիրակի XIX-XX դդ. գեղարվեստական գործվածքն իր ողջ բազմազանությամբ: Այդ ուղղությամբ կատարվել է գորգագործության, կարպետագործության, ասեղնագործության, ժանեկագործության ու դաջազարդության, դրանց ոճական գեղազարդման և գունային առանձնահատկությունների, ինչպես նաև կիրառման ոլորտների ուսումնասիրություն: Քննության են ենթարկվել նաև խորհրդային շրջանում Լենինականի առաջնային արտադրության մշակույթի խնդիրները: Կատարվել է հին զբաղմունքների տրանսֆորմացիաների (վերափոխումներ), արհեստագործական որոշ ճյուղերի վերապրոֆիլավորման և նոր՝ մինչ այդ քաղաքում գոյություն չունեցած արդյունաբերական մասնագիտությունների առաջացման ու արմատավորման հարցե-

րի ուսումնասիրություն: Շարունակվել է Շիրակի բանավոր երգաստեղծության տեքստի լեզվական ուսումնասիրությունը: Քննության է առնվել ժողովրդական բանահյուսության առավել կենսունակ ժանրերից ողբերգը: Վերջինիս կատարումը ենթադրում է խիստ որոշակի հանգամանքներ՝ այն սահմանափակվում է միայն թաղման ծիսական շղթայով, հետևապես ողբերգն ուսումնասիրվել է հենց թաղման ծեսն ուղեկցող ողբասացության համապատկերում: Իրականացված բանահավաքչական աշխատանքների արդյունքում ձայնագրվել է ժամանակակից ողբասացների շուրջ 200 ստեղծագործություն: Կատարվել է Ալեքսանդրապոլ-Գյումրու հայտնի գերդաստանների, դրանց առնչվող բանավոր պատմումների ու զրույցների, Գյումրու երգային ու բանաձևային բանահյուսության համակարգման ու տարբերակայնության քննություն:

Բանագիտության գծով- 2021թ. քննվել են Գյումրու արդի խոսվածքի ձևաբանական իրողությունները պատմական զարգացման մեջ: Ուսումնասիրության կիզակետում է եղել նաև մանկական բանահյուսական նյութերի տեքստաբանական քննությունը: Դիտարկվել է օրորոցայինը որպես արթնացումի տեքստ: Հետազոտության առանցքում են եղել թե՛ բանահյուսական, թե՛ հեղինակային օրորները, որոնք բովանդակային տարբեր շերտերում ամփոփում են զարթնումի՝ զարթոնքի բաղադրիչներ:

2021-ին Կենտրոնում իրականացվող ծրագրի շրջանակներում ընդհանուր առմամբ հրատարակվել են «Գիտական աշխատություններ» պարբերականի 24-րդ հատորի առաջին (200 էջ), երկրորդ (260 էջ) և երրորդ (324 էջ) պրակները, գիտաշխատողի մենագրություն (թվով 1), 44 գիտական հոդվածներ (8-ը՝ արտերկրում) և գիտաժողովների 60 զեկուցումներ (7-ը՝ արտերկրում):

Իրականացվել են՝ ականավոր հնագետ Հ.Ա. Մարտիրոսյանի 100-ամյակին նվիրված «Գիտությունը սկսվում է նախնադարում» խորագրով միջազգային եռօրյա առցանց գիտաժողովը՝ 62 մասնակիցներով (6-ը արտերկրից), «Հյուսիսային Հայաստանը պատմության խաչուղիներում (պատմամշակութային համադրություններ)» խորագրով միջազգային երկօրյա գիտաժողովը 54 մասնակիցներով (3-ը արտերկրից), հնագետ Լ. Եգանյանի հիշատակին նվիրված «Հանրապետական գիտական ընթերցումներ», ազգաբան-երաժշտագետ Հ. Ափինյանի հիշատակին նվիրված «Ազգագրական ընթերցումներ», Կարսի պայմանագրի հարյուրամյակին նվիրված «Պատմագիտական ընթերցումներ», 4 հնավայրերի պեղումներ, 34 ազգագրական գիտարշավներ և 13 գիտական սեմինարներ: ՇՀՀ կենտրոնի գիտական, գիտակազմակերպչական և հրատարակչական գործունեության մասին մանրամասն տեղեկատվությամբ հաշվետու տարում գործել են ֆեյսբուքյան էջը և համացանցում տեղադրված երկլեզվյա կայք-էջը /www.shirakcenter.sci.am/:

ՇՀՀ կենտրոնի տնօրեն Ա. Հայրապետյան

գիտքարտուղար Ա. Ակոպով

3. Թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված արդյունքները 2021թ.

2021 թ. հոկտեմբերից ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի **«Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային** (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական թեմաների մրցույթի արդյունքներով կենտրոնում իրականացվում են երկու թեմաներ.

ա. ***«Տայքը IX-XI դարերում (պատմաճարտարապետական ուսումնասիրություն)»*** թեմատիկ ֆինանսավորմամբ ծրագրի կատարման առաջին եռամսյակում կատարվել է միջնադարյան հայկական, վրացական, բյուզանդական և այլ սկզբնաղբյուրների հանգամանալի ուսումնասիրություն, դրանցում առկա թեմային վերաբերող նյութի համեմատություն և համադրություն: Թեմայի կատարման առաջին եռամսյակում հրատարակվել են գիտական երեք հոդվածներ, ինչպես նաև ՀՀ-ում և արտերկրում անցկացված միջազգային գիտաժողովների շրջանակներում ընթերցվել են երեք զեկուցումներ:

բ. ***«Հայ աշուղական արվեստը պատմաքննական լույսի տակ»*** թեմատիկ ֆինանսավորմամբ ծրագրի շրջանակներում գիտական խումբը գիտահավաքչական աշխատանքներ է սկսել Թիֆլիսի նշանավոր հայ աշուղների կյանքին և ստեղծագործական գործունեությանը վերաբերող նյութերի հավաքագրման, համակարգման ու անվանացանկի կազմման ուղղությամբ: Արխիվային աշխատանքներ են տարվել Երևանի Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի պահոցներում, ինչպես նաև Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ֆոլկլորագիտության ամբիոնի ձայնադարանում:

Կատարող խումբը մասնակցել է միջազգային երեք գիտաժողովների և հրատարակել մեկ գիտական հոդված:

ՇՀՀ կենտրոնի տնօրեն Ա. Հայրապետյան

գիտքարտուղար Ա. Ակոպով

4. –

5. 2021 թ. հրապարակումների ցանկ

Մենագրություններ, ժողովածուներ

1. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածու, Գյումրի, 2021, հ.24, պրակ 1, 200 էջ:
2. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածու, Գյումրի, 2021, հ.24, պրակ 2, 260 էջ:
3. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածու, Գյումրի, 2021, հ.24, պրակ 3, 324 էջ:
4. Խաչատրյան Հ., «Լարիսա Գրիշայի Եգանյան, կենսամատենագիտություն», Ե., 2021, 50 էջ:

Հոդվածներ, զեկուցումներ

1. Ալեքսանյան Կ.Վ., Քաղաքական բռնություններն Ալեքսանդրապոլի գավառում խորհրդային իշխանության հաստատման առաջին ամիսներին /1921թ ապրիլ-դեկտեմբերին/, Պեյրութ, Հայկազեան հայագիտական հանդէս, հ.41, 2021, էջ 157-171:
2. Հայրապետյան Ա.Ս., Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը Հայաստանի առաջին հանրապետության տարիներին (Ալեքսանդրապոլի օրինակով), Ереван, “Регион и мир” научно-аналитический журнал, 2021, том XII, № 6, с. 43-49.
3. Պետրոսյան Ս.Գ., Հարևան երկրների հայկական անվանումները «հյուսիս-հարավ» հակադրամիասնական հասկացությունների լույսի ներքո, ՎԷՄ համահայկական հանդես, N 3, էջ 66-90:
4. **Авагян И.Э.**, Оганнисян Г. А., 2021, Архитектурно-исторический центр «Кумайри» в городе Гюмри, и советские фильмы снятые здесь, Махачкала, Актуальные проблемы современной науки: взгляд молодых ученых материалы VII международной научно-практической конференции, изд. «Алеф»,2021, с. 25– 30.
5. **Авагян И. Э.**, Оганнисян А., Оганнисян Г. А., Почему было закрыто кладбище на холме чести в городе Александрополе (по документам национального архива Республики Армения)// Восьмые Всероссийские историко-этнографические чтения, посвященные памяти профессора Магомедова Расула Магомедовича: сб. статей. – Махачкала: Издательство ДГУ, 2021, с. 15-18.
6. Айрапетян С.А., Международные научные конференции в Гюмри, Ереван, “Регион и мир” научно-аналитический журнал, 2021, том XII, № 6, с. 196-199.
7. **Хачатрян А.А.,** Худавердян А.Ю., Енгибарян А.А., Матевосян Р.Ш., Алексанян Н.Г**.,** Физический тип населения Армянского нагорья в эпоху античности (по остеометрическим материалам городских и сельских поселений). Вестник археологии, антропологии и этнографии. 2021. № 1 (52), с. 118-131.
8. Harutyunyan H. H., About some stylistic features of Shirak dance songs written in the early 20th century, Warshaw, International Journal of Innovative Technologies in Social Science. N6, 2021, p.121-128
9. Harutyunyan H.H., Alexander Spendiaryan and Shirak Ashough Art, Dnipro, Ukraine, Integration of Education, Science and Business in Modern Environment: Summer Debates, 2021, p. 81-84.

10. Harutyunyan H.H, Asatryan A.H., Khachtryan D., Sayat Nova and the Armenian ashug art, International Journal of Innovative Technologies in Social Science. N4 (32). 2021, Warshaw, p.125-138.
11. Harutyunyan H., Asatryan A.H., Khachtryan D., Armenian ashug art of the 18th century, International Journal of Innovative Technologies in Social Science. N4 (32). 2021, Warshaw, p.139-149.
12. Hayrapetyan A.S., Activities of Alexandrapol Municipal Autonomy Bodies in 1918-1920, Yerevan, "Review of Armenian studies", 2021, N 2 (26), p. 8-19.
13. **Matikyan H.,** Torosyan R., Fairy Tale: A Unique Method of Enriching Vocabulary, ՇՊՀ Գիտական տեղեկագիր, 2021, N2, p.34-40.

Հոդվածները հրատարակվել են ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուում, Գյումրի, 2021, հ. 24, պրակ 1, 200 էջ:

1. Ակոպով Ա.Ա., Բերդագրակի գավառի բնակչության ազգային կազմը XVI-XVIII դարերում, էջ 19-29:
2. Այվազյան Գ.Ս., Մովսես Խորենացու երկասիրությունների հրատարակությունների պատկերազարդման խորհրդաբանությունը (XVII-XIX դդ.), էջ 30-38:
3. Ավագյան Ի.Է., Գյումրու Պատվո բլուրը որպես պատմամշակութային պահպանական միավոր, էջ 64-72:
4. Բոյաջյան Ա.Գ., Շիրակի մարզի բնակչության սեռատարիքային կառուցվածքի փոփոխությունը (XXդ. վերջ-XXIդ.սկիզբ, էջ 73-84:
5. Հարությունյան Հ. Ալեքսանդրապոլի ավանդական երաժշտությունը Ալ.Սպենդիարյանի ստեղծագործության մեջ, էջ 147-153:
6. Հովհաննիսյան Ա.Լ., Թանգարանների դերը քաղաքի մշակութային կյանքում (Շիրակի երկրագիտական թանգարանի և Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարանի օրինակով), էջ 172-180:
7. Հովհաննիսյան Ռ.Պ., Ալեքսանդրապոլի երևելի դեմքը՝ գրական կերպարի նախատիպ, էջ 130-139:
8. Մատիկյան Հ.Հ., Օրոր-ողբերգ տեքստերը հայկական բանահյուսության մեջ (գրական միջավայրի համատեքստում), էջ 97-107:
9. Պետրոսյան Ս.Գ., Տարոն-Բզնունիքի արտոնյալ դասերի և պաշտամունքի մասին, էջ 5-18:
10. Սահակյան Կ.Ա., Հայրական դպրոցի սոցիալ-հոգեբանական առանձնահատկություն-ները, էջ 181-190:

Հոդվածները հրատարակվել են ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուում, Գյումրի, 2021, հ. 24, պրակ 2, 260 էջ:

1. Ակոպով Ա.Ա., Մամրվանի գավառի ժողովրդագրական պատկերն ըստ XVI դարի օսմանյան հարկացուցակների, էջ 101-110:

2. Այվազյան Գ.Ս., Հայրապետյան Ս.Ա., «Ալեքսանդրապոլի գրական-երաժշտական բարքերի արտացոլումը «Սոխակ Հայաստանի» երգարանում, էջ 243-251:
3. Ավագյան Ի.Է., 2021, Ինչու փակվեց Ալեքսանդրապոլի Պատվո բլուրի գերեզմանոցը (ըստ ՀՀ ազգային արխիվի փաստաթղթերի), էջ 124-131:
4. Բազեյան Կ.Ռ., Շիրակի կանացիակերպ աղամանները, էջ 183-190:
5. Հայրապետյան Ա.Ս., ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի զինվորական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը ռուսական առաջին հեղափոխության տարիներին, էջ 132-141:

Հոդվածները հրատարակվել են ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուում, Գյումրի, 2021, հ. 24, պրակ 3, 324 էջ:

1. Ալեքսանյան Կ.Վ., Սողացող էպանսիայի թուրքական ռազմավարությունը 1920թ. թուրք-հայկական պատերազմի շրջանում, էջ 140-147:
2. Ակոպով Ա., Հայրապետյան Ա., Կիսկիմի (Բերդագրակի) գավառի պատմաճարտարապետական հուշարձանների տեղագրության ու արդի վիճակի շուրջ, էջ 105-114:
3. Այվազյան Գ.Ս., Վենետիկի Մխիթարյանների հոգևոր ներկայությունն Ալեքսանդրապոլի հասարակական կյանքում, էջ 78-86:
4. Ավագյան Ի.Է., 2021, Սարդուրյան տարեգրությունը Էրիախի երկրի մասին, էջ 5-14:
5. Բազեյան Կ.Ռ., Շիրակի գեղարվեստական գործվածքը XIX դ.վ.- XX դարասկզբին, էջ 204-211:
6. Բոյաջյան Ա.Գ., Շիրակի մարզի բնակչության ազգային փոքրամասնությունների թվի շարժընթացը (XXդ. վերջ XXIդ. սկիզբ), էջ 177-187:
7. Խաչատրյան Հ.Հ., Մելիք-Ադամյան Հ., Հովհաննիսյան Ա., Բաբայան Տ., Ռուս եւ եվրոպացի ճանապարհորդների մշակութաբանական եւ բնագիտական ուսումնասիրությունները հյուսիս-արեւելյան Հայաստանում (մինչեւ 1820թ.), էջ 155-162:
8. Հովհաննիսյան Ա.Լ., Հին Հայաստանի զենքերի և զինատեսակների ուսումնասիրության պատմագրությունը (նախնական ակնարկ), էջ 15-20:
9. Մատիկյան Հ.Հ., Օրորոցայինը՝ որպես արթնացումի տեքստ բանահյուսական և հեղինակային մտածիրում, էջ 236-245:
10. Մելքոնյան Վ.Գ., Լենինականի արդյունաբերական քաղաք դառնալու ճանապարհը. մարդկանց ձայները որպես ուսումնասիրության աղբյուր, էջ 212-217
11. Պետրոսյան Լ.Ս., Մովսես Խորենացու հիշատակած «շերտավոր» եզրույթի շուրջ, էջ 42-48:
12. Պետրոսյան Ս.Գ., Ուրարտական թագավորության կազմավորման մասին, էջ 33-41:
13. Սահակյան Կ.Ա., Հովհաննիսյան Ռ.Պ., Գյումրի-Ալեքսանդրապոլի հայտնի գերդաստանների մասին տեղական զրույցներ, էջ 194-203:
14. Վարդանյան Բ.Վ., Մկրտչյան Լ., Լեռնակերտի բրոնզ-երկաթիդարյան հուշարձանների մոդելավորման և թվայնացման խնդիրները, էջ 21-32:
15. Наатакян Д.С., Церковь Норашен в контексте армянской архитектурной школы Тайка и Гугарка X-XI вв., с. 293-306.
16. McDowel R., Matikyan H.H., Childlore and Children's Folklore in the UK and in Armenia: an Historical and Current Perspective, p. 218-228.

6. Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Տնօրեն՝ պ. գ. թ., դոցենտ Ա. Ս. Հայրապետյան,
Գիտքարտուղար՝ պ. գ. թ. Ա. Ա. Ակոպով,
Էլեկտրոնային փոստ՝ info@shirakcenter.sci.am, hkentron@mail.ru,
Կայքէջ՝ www shirakcenter.sci.am

7. —-
8. —
9. ---
10. –ՇՀՀ կենտրոնը հաշվետու տարում համագործակցել է ԳԱԱ հայագիտական ինստիտուտների, ԵՊՀ-ի, ՀՊՄՀ-ի, ՃՇԱՀ, ՎՊՀ, ՇՊՀ-ի մի շարք հայագիտական ամբիոնների, Կոմիտասի անվ. կոնսերվատորիայի, Մ. Մաշտոցի անվան Մատենադարան հին ձեռագրերի ինստիտուտ, Կոմիտասի թանգարան–ինստիտուտ, Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարան, Ալ. Թամանյանի անվան ճարտարապետության թանգարան-ինստիտուտ, Հայոց ազգագրության, Հայաստանի պատմության ազգային, Գյումրու երկրագիտական և ժող. Ճարտարապետության ու քաղաքային կենցաղի թանգարանների, ԳԱԹ-ի և այլ պետական ու հասարակական կազմակերպությունների հետ:

Համատեղողների թիվը՝ 5 /ՇՊՀ/, 2 /ԵՊԿ Գյումրու մասնաճյուղ/, 2 /ՇԵԹ/, 2 /ՀԱԻ/:

2021թ. եղել են 8 համատեղ հրապարակումներ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտ /2/, Շիրակի երկրագիտական թանգարան /2/, Միացյալ թագավորության բանահյուսական ընկերություն /1/, Երևանի պետական համալսարան /1/, ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ /1/, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան /1/:

ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝ Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

գիտքարտուղար՝ Ա. ԱԿՈՊՈՎ

Աղյուսակ 1

2021թ. թեմատիկայի ամփոփ տվյալներ

N	Կազմակերպությունը	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (n) և ֆինանսավորման ծավալը (X հազ.դր.)			
		Նպատակային ֆինանսավորում	Բազային ֆինանսավորում	Թեմատիկ ֆինանսավորում	Տնտ. Պայմանագրեր
1	«Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ		1	3	
			26748.5	3197.0	

Աղյուսակ 2

Աղյուսակ 3

Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային միջոցառումները

N	Միջոցառման անվանումը	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	Այդ թվում՝ արտերկրից
1	2	3	4	5
1.	Հանրապետական պատմագիտական ընթերցումներ նվիրված Կարսի պայմանագրի 100-ամյակին	Գյումրի, 13 հոկտեմբերի, ՇՀՀ կենտրոն	8	-
2.	Հանրապետական գիտական ընթերցումներ նվիրված հնագետ Լ. Եգանյանի հիշատակին	Գյումրի, 26 հունիսի, ՇՀՀ կենտրոն	32	-
3.	Ազգագրական ընթերցումներ նվիրված Հ.Ափինյանի հիշատակին	Գյումրի, 25 հուլիսի, ՇՀՀ կենտրոն	25	-
4.	Գիտությունը սկսվում է նախնադարում – միջազգային գիտաժողով նվիրված ականավոր հնագետ Հ.Ա.Մարտիրոսյանի 100-ամյակին	Երևան-Գյումրի, 1-3 հոկտեմբերի, ՇՀՀ կենտրոն, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ	62	6
5.	Հյուսիսային Հայաստանը պատմության խաչուղիներում /պատմամշակութային համադրություններ/ – միջազգային գիտաժողով	Գյումրի, 22-23 հոկտեմբերի, ՇՀՀ կենտրոն	54	3

Աղյուսակ 4

Աղյուսակ 5

կազմակերպությունում արտասահմանյան գիտնականների ընդունելությունը

(*համավարակով պայմանավորված կապն օտարերկրյա գործընկերների հետ իրականացվել է առցանց եղանակով՝ ZOOM հարթակում*)

N	Կազմակերպու-թյունը	Երկիրը	Ընդունված գիտնականների քանակը		
			Գիտաժողովներին մասնակցելու	Համատեղ գիտական աշխատանք կատարելու	Բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
1	«Շիրակի հայագի-տական հետազո-տությունների կենտրոն» ՊՈԱԿ	**ՌԴ,** **Մեծ Բրիտանիա** **Գերմանիա,** **Վրաստան,** **Հունաստան,**	**1** **2** **2** **1** **1**		

Աղյուսակ 6

Աղյուսակ 7

ԳԱԱ գիտաշխատողների 2021թ. հրապարակումների ընդհանուր քանակը

№	Կազմակերպու-թյունը	Մենագրություններ, հոդվածների ժողովածուներ, գլուխ(ներ) գրքերում		Ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր		Հոդվածներ գրախոսվող ամսագրերում		Հոդվածներ գիտաժողովների նյութերի ժողովածուներում		Թեզիսներ	
		Հանրա-պետ.	Արտա-սահմ.	Հանրա-պետ.	Արտա-սահմ.	Հանրա-պետ.	Արտա-սահմ.	Հանրա-պետ.	Արտա-սահմ.	Հանրա-պետ.	Արտա-սահմ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
	«ՇՀՀ կենտրոն» ՊՈԱԿ	4	-	-	-	36	5	-	3	2	1

Աղյուսակ 8

Աղյուսակ 9

Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներն առ 01.01.2021թ.

N	Կազմակերպությունը	Աշխատողների ընդհանուր թիվը	Գիտական աշխատող ների թիվը	ԳԱԱ ակադեմի-կոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
1	2	3	4	5	6	7	8
	«ՇՀՀ կենտրոն» ՊՈԱԿ	21	18	----	----	2	12

Աղյուսակ10

ԳԱԱ համակարգում աշխատող գիտական կադրերի 2021թ. ատեստավորման արդյունքները

		Գիտական կադրերի թիվը	Ատեստավորման ենթակա անձանց թիվը	Ատեստավորմանը մասնակցած անձանց թիվը	Ատեստավորման արդյունքները			
					համապատասխանել են զբաղեցրած պաշտոններին	բարձրացվել են զբաղեցրած պաշտոնները	իջեցվել են զբաղեցրած պաշտոններից	ազատվել են աշխատանքից
1	2	3	4	5	6	7	8	9
Գիտական պաշտոններ								
1	Կրտսեր գիտաշխատող	1	1	1		1		
2	Գիտաշխատող	7	7	7	7			
3	Ավագ գիտաշխատող	7	7	7	7			
4	Առաջատար գիտաշխատող	2	2	2	2			
5	Գլխավոր գիտաշխատող							
Ընդամենը՝		17	17	17	16	1		
Ճարտարագիտատեխնիկական պաշտոններ								
1	Լաբորանտ կամ ճարտարագետ	1	1	1	1			
2	Ավագ լաբորանտ կամ ավագ ճարտարագետ							
Ընդամենը՝		1	1	1				
Գիտական ղեկավար պաշտոններ								
1	Գիտական խմբի ղեկավար							
2	Լաբորատորիայի վարիչ							
3	Սեկտորի վարիչ							
4	Բաժանմունքի ղեկավար							
5	Կենտրոնի ղեկավար							
6	Այլ ղեկավար պաշտոններ							
Ընդամենը՝		1	1	1	1	1		
ԸՆԴԱՄԵՆԸ՝		18	18	18	17	1		

ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի տնօրենի՝ Ա. Հայրապետյան

ГОДОВОЙ ОТЧЕТ

Об основных результатах научной и научно-организационной деятельности 2021г. Ширакского центра арменоведческих исследований НАН РА

1. Основные результаты деятельности ШЦАИ НАН РА за 2021г. следующие:

В рамках научной темы «Археологические и историко-культурные исследования Ширака-3» (рук. к.ист.н. А.Айрапетян).

а. В 2021 г. раскопки крепости-поселения Джрадзор выявили некоторые сопоставимые данные в расположенных далеко друг от друга поселениях Ширака IX-VIII вв. до нашей эры. В Джрадзоре на мощеном полу № 5-го жилища были открыты жернова и сковорода. Там же был найден колодец, заполненный предметами типичными IX-VIII вв. до н. э. Такая же картина и с жилищем у стены крепости Азатан и в крепости Ширакаван того же периода. Наличие таких общих черт в различных памятниках позволяет сделать вывод, что в VIII в. до н.э. две крепости и поселения подверглись нападению. Если в Азатане это проявилось большим пожаром, то в крепость-поселении Джрадзор и в крепости Ширакаван были обнаружены урартские сломанные, изогнутые оружия и наконечники стрел в стенах. Сопоставление этих реалий с данными двух урартских протоколов найденных в Шираке, позволяет рассмотреть направления движения урартских войск с севера на юго-восток и юго-запад, а затем через бассейн реки Ахурян на Араратскую равнину.

б. При раскопках некрополя № 1 Лернакерта были обнаружены захоронения, относящиеся к эпохе средней бронзы - поздней бронзы (II половина XVIв. до н.э. –I половина XVв. до н.э.), где одновременно встречаются и среднебронзовые краснокрепостные, и позднебронзовые предметы. Большое значение имеют также раскопки плиточных склепов эпохи поздней бронзы. Окруженные фиксирующим кромлехом с каменной заливкой, плиточными камерами, направленными с востока на запад, с пристройками с восточной стороны, эти склепы, относящиеся к переходному периоду от позднебронзового к железному веку, не типичны для памятников Ширака того периода. В этих плиточных склепах переходного периода зафиксированы двухслойные массовые захоронения, с различным сопутствующим инвентарем. Антропологические, археологические и радиометрические исследования (а также ДНК) массовых захоронений позволят дать представление о хронологии и последовательности культур древних сообществ, проживших на склонах Арагаца.

в. На примере Александрополя была изучена деятельность органов местного самоуправления в годы Первой Республики Армения. Формирование органов местного самоуправления было важнейшим средством становления системы государственного управления и государственной власти в новоиспеченной независимой республике. Изучение их деятельности важно для обобщения истории государственного устройства Первой Республики Армения, а полученный опыт был полезен с точки зрения формирования действующей системы территориального управления и органов местного самоуправления Республики Армения.

2. Основные результаты по базовому финансированию в 2021 году

ШЦАИ НАН РА за 2021г. продолжил осуществление научной темы **«Археологические и историко-культурные исследования Ширака-3»** (рук. к.ист.н. А.Айрапетян).

По археологии – в 2021 г. подготовлены и сданы в межведомственную археологическую комиссию РА научные отчеты об археологических раскопках Мец Сепасар, Джрадзор, Джрапи, Азатан. Были проведены раскопки совместной армяно-германской экспедицией в крепости-поселении Джрадзор эпохи железа. В ходе раскопок этого года был изучен средне - поздний период бронзового века Лернакерта, а также гробницы железного века, где были зафиксированы необычные для Ширака до этого времени погребальные сооружения. Изучаются полученные антропологические данные.

По историографии - в 2021 г. доказано, что существование названий ряда стран, соседствующих с Армянским нагорьем (Гамира, Иберия / Вирк, Адиабене и др.), будучи обусловленным реальным положением этих стран по отношению к Армянскому нагорью, одновременно имеют также индоевропейско-армянское происхождение. Продолжено историко-демографическое изучение территорий, прилегающих к историческому Тайку, исследован демографический материал в османском налоговом списке 16 века, представлены численность и этнорелигиозный состав населения Кискимской, Мамрванской губерний Тайка. Обосновано, что последние события XIX в. в социальной и политической жизни и подъем рабочего движения создали благоприятные условия для формирования марксистских рабочих групп в армянской действительности. В 1904–1905 гг. эти организации в Александрополе организовали и руководили массовые выступления железнодорожников и других рабочих. Выявлено, что большое количество армян-католиков из Александрополя и окрестных деревень во второй половине 19 века поехали учиться в Св Лазарь. Многие из них позже стали членами Конгрегации, в то время как другие, завершив учебу, вернулись и предприняли активную деятельность среди армян-католиков в Александропольской губернии и Закавказье. Были представлены примечательные факты об отношениях александропольских общественных деятелей с отцом Хевондом Алишаном. Представлены новые демографические данные начала XXI века о перемещении населения региона, половозрастном составе, территориальной структуре, об изменении процесса естественного воспроизводства и миграции.

По этнографии - 2021 году ставилась задача изучить художественную ткань Ширака XIX-XX веков во всем ее разнообразии. В этом направлении проведено исследование ковроткачества, вышивки, набивания узоров, их стилистического оформления и цветовых особенностей, а также сферы их применения. Изучены также задачи культуры первичного производства Ленинакана в советский период. Проведено исследование вопросов трансформации старых профессий, перепрофилирования некоторых отраслей ремесла, а также появления и становления новых промышленных профессий, которых раньше в городе не было. Продолжено лингвистическое изучение текста устного написания песен Ширака. Рассмотрена скорбная песнь, как наиболее жизнеспособный жанр фольклора, выполнение которого предполагает вполне определенные обстоятельства, оно ограничивается только ритуальной цепочкой погребения, следовательно песнь исследовалась непосредственно во время траурной церемонии. Осуществлены собирательные работы фольклорного материала и записаны около 200 современных скорбных песен. Изучены известные семья Александраполя-Гюмри, относящиеся к ним устные рассказы и беседы, а также систематизация и типологическое исследование песенного фольклора.

По филологии – в 2021 г. исследованы морфологические реалии современного гюмрийского говора в историческом развитии, проведено лингвистическое исследование детского фольклорного материала. Колыбельная воспринималась как пробуждающий текст. В центре внимания исследования были как фольклорные, так и авторские колыбельные, которые суммируют компоненты пробуждения на разных уровнях содержания.

В 2021 г. в Центре в рамках проводимой программы в общем расчете были опубликованы первый (200 стр.), второй (260 стр.) и третий (320 стр.) праки 24-го тома периодического сборника Центра “Научные труды”, 1 монография научного сотрудника Центра, 44 научные статьи (8 зарубежом) и 60 докладов конференций (7 зарубежом).

Проведены трехдневная международная онлайн конференция «Наука начинается в первобытности», посвященная 100-летию выдающегося археолога А.А. Мартиросяна с 62 участниками (4 из-за границы); двухдневная международная конференция «Северная Армения на перекрестках истории (историко-культурные сочетания)» с 54 участниками (3 из-за рубежа); «Республиканские научные чтения», посвященные памяти археолога Л. Еганяна; «Этнографические чтения», посвященные памяти этнолог-музыковеда А. Апиняна; «Исторические чтения», посвященные 100-летию Карсского договора; раскопки 4 археологических памятников; 34 этнографические экспедиции; 13 научных семинара. Действовали двухязычный сайт (www.shirakcenter.-sci.am) Центра и страница на фейсбуке, с подробной информацией о научной, научно-организационной и издательской деятельности Центра.

Директор ШЦАИ А. Айрапетян

Научный секретарь А. Акопов

3. Основные результаты по тематическому финансированию в 2021 году

С октября 2021г. в результате конкурса научных тем, в рамках тематического финансирования «Научной и научнотехнической деятельности» комитета науки МОНКС РА, в Центре осуществдяются две темы.

а. «Тайк в IX-XI веках (историко-архитектурное исследование)», в первом квартале программы было проведено детальное изучение средневековых армянских, грузинских, византийских и других первоисточников, сопоставление и сравнение материала из этих источников, относящихся к данной теме. В первом квартале по теме было опубликовано три научных статьи, а также представлено три доклада в рамках международных научных конференций, проводимых в Армении и за рубежом.

б. В рамках тематического финансирования программы **«Армянское ашугское искусство в историко-критическом свете»** научная группа приступила к исследовательской работе по сбору, систематизации и составлению списка материалов, касающихся жизни и творческой деятельности известных армянских ашугов Тифлиса (Грузия). Были проведены архивные работы в архивах музея литературы и искусства имени Е. Чаренца в Ереване, а также в фонотеке кафедры фольклора Ереванской государственной консерватории им. Комитаса.

Группа участвовала в трех международных конференциях и опубликовала одну научную статью.

Директор ШЦАИ А. Айрапетян

Научный секретарь А. Акопов

A N N U A L R E P O R T

on the main results of scientific research and scientific organizational activities of Shirak Center for Armenological Studies of the RA National Academy of Sciences in 2021

1. **The most important results of the activities of 2021 of Shirak Center for Armenological Studies of the RA NAS are as follows:**

Within the scientific topic of «Archaeological and historical-ethnographic studies of Shirak-3» /supervisor: PhD in History, Armen Hayrapetyan/:

a. In 2021 as a result of Jradzor's castle-settlement excavations, some parallel facts were revealed in settlements in Shirak IX-VIII BC. Saj and mills were opened on the paved floor of № 5 dwelling in Jradzor. In the same place pit was found filled with things dating back to the VIII BC. The picture is the same in the shelter next to the gate of Azatan and Shirakavan fortresses.

The existence of such similarities in the various monuments allows us to conclude that both castles and settlements were attacked in VIII BC. In case of Azatan, it is expressed by fire, for Jradzor fortress settlement and Shirakavan fortress Urartian broken and bent weapons with arrowheads were discovered. The comparison of these facts with the data of the two Urartian protocols in Shirak allows us to observe the directions of the Urartian troops from north-east to south-west, and then through the Akhuryan river basin to the Ararat plain.

b. During the excavations of the kurgana Lernakert № 1, burials were opened dating back to the passing period from middle bronze to late bronze (II half of the XVI BC- I half of XV) where objects belonging to middle bronze age red fortress and late-bronze age are evident. Excavations of shallow tombs of the Bronze Age are of great importance.

The district is a fixed cromlech with rocky outcrops to the east, a tomb on the east side, dating to the later Bronze and Iron Ages, is not typical of modern-day Shirak monuments. In the staging process two-layered mass burials were documented with different combustion constraints. Anthropological, archaeological and radiometric studies of mass burials provide a representation of the chronologies, sequences and cultures of the Aragats.

c. Following the example of Alexandropol, the activities of local self-government bodies during the years of the First Republic of Armenia were studied. The formation of local self-government bodies was the most important means of exercising public administration and public power in the newly independent republic. The examination of their activities is important for the completion of the history of the state system of the First Republic of Armenia, and the experience gained is useful from the point of view of the formation of the current system of territorial administration and local self-government bodies of the Republic of Armenia.

2. The main results of 2021 obtained with basic financing

In 2021 Shirak Center for Armenological Studies of the RA NAS continued to carry out **«Archaeological and historical-ethnographic studies of Shirak-3»** /supervisor: PhD, Armen Hayrapetyan/ scientific research:

In the field of archeology- In 2021 final scientific reports of the excavations of Mets Sepasar, Jradzor, Jrapi, Azatan, antiquities were submitted to the RA Interdepartmental Archaeological Commission. Excavations of a joint Armenian-German expedition were carried out in Jradzor Iron Age Period in Fortress-settlement. By means of the current year's excavations have examined the Lernakert Middle - Late Bronze Age, as well as the Iron Age tomb complexes, where unusual burial structures and conditions for Shirak have been documented so far. The obtained anthropological data are examined.

In the field of historiography-In 2021 it has been proved that the existence of a number of countries near the Armenian Highlands (Gamira, Iberia / Virk, Adiabene, etc.) due to the real position of those countries in relation to the Armenian Highlands, at the same time have Indo-European-Armenian origin. The historical-demographic study of the areas adjacent to historical Tayk was continued. The demographic material (XVI c.) in the Ottoman tax list presented the number of population and ethno-religious composition of the Kiskim, Mamrvan provinces of Tayk.

It has been substantiated that recent developments in social and political life and the rise of the labor movement in XIX created favorable conditions for the formation of Marxist workers' groups in the Armenian reality. In 1904-1905 these organizations carried out mass demonstrations of railway workers and other working classes in Alexandropol. It was revealed that a large number of Armenian Catholics from Alexandropol and the villages of the province of the same name moved to St Lazarus to study in the second half of the XIXcentury.

Many of them later became members of the Congregation, while others returned to study and became active among the Armenian Catholics in the Transcaucasian province of Alexandropol. Remarkable facts were also revealed about the relations between Alexandropol public figures and father Ghevond Alishan. At the beginning of the XXI century new demographic data were presented on the movement of the region's population, gender composition, natural reproduction and migration.

In the field of ethnography- In 2021 a task was set to study artistic fabric /with its varieties/ of Shirak in XIX- XX cc. In this context it is worth mentioning the study on carpet and rug weaving,embroidery, lace-making and tattoo picturing as well as their fields of application. The issues of Leninakan primary production culture in the Soviet period were also examined. A study of the transformations of old occupations, re-profiling of some craft branches, and the emergence and establishment of new industrial professions that did not exist in the city before. The linguistic study of the text of Shirak oral composition continued.

One of the vital genres of folklore – lamentations has been studied. The performance of the latter presupposes very certain circumstances, it is limited only by the ritual chain of burial, and then the lament was studied in the context of the mourning accompanying the funeral rite. As a result of field work, about 200 works of modern lamenters were recorded. Survey was conducted in the following ways: famous Alexandrapol-Gyumri families, their oral stories and conversations, the coordination and classification of Gyumri song and formula folklore.

In the field of Folklore Studies- In 2021 the morphological positions of Gyumri's Modern dialect were analyzed through the prism of historical development. The key-stone of the study was the textual examination of children folklore. Lullaby was studied as an awakening text. The reaearch was based on both traditional and literary lullabies that covered awakening components in different semantic levels.

Within the framework of the program implemented in the Center in 2021, the first (200 pages), the second (260 pages) and the third (294 pages) of the 24th volume of the "Scientific Papers" periodical were published. Proceedings, monograph of the researcher (number 1), 44 scientific articles (8 abroad), 60 reports of conferences (7 abroad).

Prominent archaeologist H.A. Martirosyan's three-day international conference was held entitled "Science Begins in Prehistory" dedicated to Martirosyan's 100th anniversary with 62 participants (4 from abroad), two-day international conference entitled "Northern Armenia at the Crossroads of History (Historical-Cultural Combinations)" with 54 participants (3 from abroad), archeologist L. Yeganyan's "Republican Scientific Readings" dedicated to Yeganyan's memory, ethnologist-musicologist H. Apinyan's "Ethnographic readings" dedicated to H. Apinyan's memory, "Historical readings" dedicated to the centenary of the Kars Treaty, excavations of 4 ancient sites, 34 ethnographic expeditions, 13 scientific seminars. The scientific, scientific-organizational-publishing activities of the Shirak Center for Armenological Studies, Facebook page and bilingual website on the Internet were actively launched and refreshed: /www.shirakcenter.sci.am/

Director of Shirak Center for Armenological Studies: A. Hayrapetyan

Scientific Secretary: A. Akopov

3. The results obtained with thematic financing in 2021

Since October, 2021 two topics have been implemented in the Center by the competition of the Science Committee of the Ministry of Education, Science and Culture and Sports of the Republic of Armenia in the framework of "Financing of Scientific and technical activities /thematic/.

a. A detailed study of medieval Armenian, Georgian, Byzantine and other sources was carried out in the first quarter of the program funded by ***"Tayk in the IX-XI centuries (historical and architectural study)".*** In the first quarter three scientific articles were published, as well as three reports were delivered within the framework of international scientific conferences held in Armenia and abroad.

b. Within the framework of the thematic project ***"Armenian troubadour art in the light of diachronic approach",*** the scientific group started research work on collecting, coordinating and compiling a list of materials related to the life of famous Armenian troubadours in Tbilissi (Georgia). Archival works were carried out in Yerevan. In the vaults of the Charents Museum of Literature and Art, as well as in the library of the Chair of Folklore of the Yerevan Komitas State Conservatory.

The executive group has participated in three international conferences and published one scientific article.

Director of Shirak Center for Armenological Studies: A. Hayrapetyan

Scientific Secretary: A. Akopov